և Պինկէօլ լերանց, երկիր անծանօթ է և արժանի քննութեան։

58. Ի հիւսիսոյ Ստորին Կեղջոյ, յարևմտից Կարնոյ, ի հարաւոյ Գօվի-տաղ լերանց Խաղտեաց և յարևմտից Եղընկայ՝ կայ ԴԵՐՋԱՆ վիճակ ի հնումս գաւառի համանուան, ընդ որ իջանէ Եփրատ ի Կարնոյ Յեկեղեցաց, և ընդունի զգետն Մանանաղոյ՝ որ արդ կոչի Մամախաթուն կամ Դերջանայ ջուր. գլխաւոր տեղիք վիճակին, որ ունի գեղջ իբրև 50, են Մամախաթուն աւան ի վերայ Ճանապարհի կարավանին Կարնոյ. են ի նմա աւերակք և շիրիմք սառակիներան ոճով. — Աւանայ ընդ մէջ Կարնոյ և Դերջանայ մերձ ի խառնուրդս Սարչամայ ընդ Գարասուի. — Բէգէ-ԹՃ յահեկէ Սև ջրոյ ի հիւսիսոյ Մամախաթունի. սա է ԲագայաթՃ գիւղ, յորում կանգնեալ էր պատկեր Հեփեստեայ դից բերեալ ի Յունաց. — Գարագուլա աւան ի վերայ Ճանապարհին որ ի Կարնոյ տանի ի Փ. Հայս։ — Ի ներքոյ խառնուրդս գետոյն Դերջանայ Յեփրատ կամուրջ արկեալ է՝ որ կոչի Քուդերուլեոն (ըստ Եւրոպացւոց), յանուն երկրին ԿՈՏԵՐՈՅ, որ միջատամն էր ընդ Դերջան և ընդ Եկեղեաց. յորում էին Սուրենաւեն աւան և Պուրնինի գղեակ, ժառանգութիւն հօրն Ս. Թէոդորոսի նահատակելոյ յաւուրս տքնութեան Լուսաւորչին ի վերապին. ի ձախմէ գետոյն կայ անուանի մենաստան և ուխտատեղի նորին՝ որ կոչի ՍԸՐԳԻԼԸ ՈՒՐԻ ԹՈՐՈՍ։

59. ԵՐԶՆԿԱՑ վիճակն որ է ԵԿԵՂԵՑԱՑ գաւառ յարևմտից Դերջանայ կայ, ի հարաւոյ խաղտեաց և Գելգիւտ վիճակի, յարևելից Կամախայ և ի հիւսիսոյ Տուժիկ լերին և Վերին Կեղջոյ։ Ծանօթ ի Հայս վասն հին մեհենեացն Անահտայ, և նահատակութեան մերոյս Լուսաւորչի, որոյ սրբեալ զտեղին և մասամբ ժառանգեալ առատաձեռնելով Տրդատայ՝ պատճառս եղեն նմին կոչման ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԳԱՒԱՌ. և ցարդ երևելի է սրբազան ուխտատեղիք վանորայքն ի Սեպուհ կամ ի Գոհանամ լերին, որ անջրպետէ ընդ նա և ընդ Դարանաղեաց գաւառն։ Եփրատ գետ եկեալ ի Կարնոյ և ի Դերջանայ անցանէ ի հարաւոյ գեղեցիկ և արգաւանդ և ջերմիկ հովտին Երզնկայ, ընդունելով յաջմէ զԳոյլ գետ զեկեալն ի Գելգիւտայ. մերձ ի խառնուրդս գետակին ի ձախմէն կայ քաղաքն ԵՐԶՆԿԱ որ է հին աւանն ԵՐԻԶ և մեհեան Անահտայ պաշտամանց, Իրենէոսեան կոչեցեալ ի Թրքաց. որ յամին 1045 ցամն 1784 հնգետասան անգամ և աւելի ի սասանութենէ երկրի մերթ կիսով և մերթ հիմնովին կործանեալ, կանգուն և չէն կայ ցայսօր. ունելով բերդ ի բարձու, մզկիթս և վաճառանոցս, և 4 եկեղեցիս Հայոց, յորս պահի և խաչ մի հին թուղ Տրդատայ կոչեցեալ։ Բնակիչք Երզնկայ են 3000 տունք, յորս իբրև 750 Հայոց. և իբր 500 ևս տունք են յերևանիս չափ գեղջս և յինն չէն մենաստանս Թեմին։

60. Իսկ ի բոլոր վիճակին Երզնկայ են գեղք իբրև 120 ընդ վարչութեամբ պէկի միոյ, և աւերակք եկեղեցեաց և վանորէից յոյժ ի նոսին։ Որոց գլխաւորք են Թիւն աւան յարևմտից հիւսիսոյ քաղաքին, ուր կանգնեալ էր պատկերն Ամենասայ՝ Կոնէական դէպ կոչեցեալ. ատ Թադեցան Ս. Արիստակէս և Մեծն Ներսէս, որոյ նշխարք յայտնեցան յամին 1273, և շինեցաւ անդ եկեղեցի որ արդ հանգեալ է և կոչի Ջոխոպոյ Հայրապետք։ — Շողակաթ վանք ի ստորոտս Սեպհոյ, շինեալ նախ ի Թադէէ առաքելոյ ըստ աւանդութեան և ապա ի Մեծէն Ներսիսէ։ Ի վերոյ նորին ի զառ ի վեր լերինն կայ Կայէթուի վանք Ս. Յակոբայ Մծբնայ. և ոչ հեռի անտի Ս. Մինաս վանք, ուր Յովհաննէս Երզնկացի պարապէր յուսմունս յԱԳ դարու, և միւս ևս վանք Ս. Կարապետ Միսուրու։ Ի հարաւային արևելեան կողմն Երզնկայ կան Տոպուսի վանք կամ Ճարլարանայ Ս. Լուսաւորիչ։ — Եղնաբեր Ս. Աստուածածին վանք և Ս. Գէորգ վանք առ Երիայն գեղջիս. և անուանի քան զսոսա Մեծն Ներսէս կամ Տիրաւէն վանք, զի նախ ի Տիրանայ արքայէ շինեցաւ, և ատ հանգուցաւ բաղուկ մեծին Ներսիսի ի գիւտի նշխարացն։ — Ղշանաւոր է և Ս. Կիրակոս մենաստան կամ անապատ առ Քուրդ գեղջիս։ Ի լեռնակողմանն երևին ցարդ մնացուածք խաչ և Ճրագ արքայաշէն աւանաց, և կոչին արդ Ռոմ ուերայի. յառաջնումն հանգեաւ Մեծն Ներսէս դեղմամբ գաւեալ ի Պապայ արքայէ։

61. Յարևմտից Երզնկայ կայ ԿԱՄԱԽ կամ ՔԷՄԱԽ վիճակ, որ է գաւառն ԴԱՐԱՆԱՂԵԱՑ, ի հարաւոյ Գելգիւտայ, յելից Փ. Հայոց և ի հիւսիսոյ Տուժիկայ. վասն աղահանիցն ի լերին և աղային ջրոցն այդպէս անուանեալ. լերինքն արդ Տարսիմ կոչին, և գետակք որ խառնին ատ Յեփրատ՝ Թանայոր կամ Դանուր և Գոմեր կամ Քեօմուր՝ որ գայ ի Սեպհոյ։ Գլխաւոր տեղի վիճակիս՝ (յորում են իբրև 100 գեղք) է ԿԱՄԱԽ որ և ԲԱՆ ամրոց անուանի, գամբանարան Թագաւորացն Արշակունեաց և գանձարան նոցին և մեհենեաց տեղի և մեհենական գրուածոց. յահեկէ և ի հարաւոյ Եփրատայ և յարևմտից Թանաձոր վտակի. ունի բերդ կիսաւեր ի բարձու քարափոր գբովք և սանդխոք յերեսս խորաձորոյ, և աշտարակ մի՝ տեղի ապաւինութեան խոսրովիդխտոյ քեռ Տրդատայ, զի և ցարդ կոչի Գոլգիրեն լարգաիր. յայնկոյս Եփրատայ ամբաւնայ քարաբլուր բարձր, յոր ընդ գետոնն գետնուղի անցք լինէին ի հնումն. լքեալ է արդ ամրոցս և աւանն վասն նուազութեան ջրոյ կամ դժուարութեան հանելոյ ի վեր. և կան ի նմա աւեր և անաւեր եկեղեցիք Հայոց, որպէս հոյակապն Ս. Հրեշտակապետաց։ Առ կամրջաւ միով ցուցանի տեղի վանցն Վարագադատայ զՆփրատաւ յանձուկս լեռնավայրի. և շիրիմք վկայից ոմանց մահմետականաց. ընդ որս և հին քնարանք կիսաւերք Արշակունի արանց ի կոչեցեալն Եղնաբեր Աստուածածին՝ աղիւսակերտ շինած։ — Հինգ վանորայք են Հայոց շէնք ի վիճակիս, իսկ լքեալք բազում, ևս առաւել եկեղեցիք. տունք 220 հայաբնակք։

62. Ընդ մէջ Տարսիմ և Սեպուհ լերանց կայ Աղուլեաւն, յորում են աղահանք և աղջուր՝ զոր յաւանս ժողովեալ և ցամաքեցուցեալ՝ ժողովին զաղն. կան և այլ քարայրք աղի առ Մարէ և Ճիուէր գիւղովք. զորս յիշէ Յովհաննէս Երզնկացի ի ներբողենի Լուսաւորչին։ Ի ստորոտս լերինն Աղցից են հին պո-